



## 15. ԴԱԼՈՒ ՕՂԼԱՆ

Դալու օղլան փետ մե կէներ ձի, կը հեծներ, կէրթեր թագավորի քոշկ ու սարի տակ մեյդան կիտեր, կըսեր.

— Խաչըն. աթըմ հա՛մ խափար, հա՛մ չափար<sup>1</sup>:

Օր մե չէ, էրկու չէ, թագավոր ուր աղջկան կըսե.

— Իդա տղեն ծուռ է, դինա՞ս:

Աղջիկ կըսե.

— Ծուռ չէ՛, խելացի է:

Թագավոր կըսե.

— Օր ծուռ չէ, խելացի է, գըրդի ավի էդ տղին:

է, թագավորի խոսք ըսկի գետին գընկնա՞: Ձաղջիկ կիտան տղին: Թագավորի աղջիկ, օր կառնե զԴալու օղլան, թալել կիտա գետին, կառնե զփետն ու գընկնա վրեն, զարկ հա՛ զարկ, հմալ կէնե, օր գտղեն լեզվե կէցկե:

— Թագավորի աղջիկ, դու գորի՞ն հմլա զիսի ծեծեցիր:

— Ծեծեցի,— կըսե աղջիկ,— քանի սաղ իս ու կենդանի իս՝ սուտ չը խոսաս, զօղորդ խոսաս:

Թագավորի քաղքի թուջըրներ չըմեն տարի քարվան կը կապեն. կէրթեն Չինումաչին, Հինդ ու Յաման, Շամ ու Հալար՝ առ ու ծախսի: Ուրանց ճամպու վրեն մինակ մեկ ջրհոր կէղնի. էդ ջրհոր ո՛ն օր մտներ, ջուր հաներ, սաղ չէր գելնի դուա, էդսարարուն տարին մարդ

<sup>1</sup> Փախե՛ք, իմ ձին թե՛ կհարվածի, թե՛ կտորի (Մ. Կ.):

սե կը վարձեն, զարունք կիտեն, կը տանեն հըտ ուրանց, օր ջուր հաներ, ուրանց, ուրանց ձիանուն:

Քաղաքի աղջիկ կըսե.

— Դալու օղլա՛ն, դու պտի էրթաս հըտ թուզըրնեբու քարվընին, բալե, տե՛ս, սուտ քու բերնեն չը հանիս, ըշտե քըզի կըսիմ:

Ձտղի արունք կաննե թուզըրնեբուց, կը դնե հըտ ուրանց:

Քարվան գընկնա ճամպեն ու կէրթան: Կէրթան, կէրթան, կը հասնին ջրհորի մոտ: Ջրեռներ կը թափին, զԴալու օղլան կը մտուն ի ջրհոր. կը տեսնա՝ հանդե ջըհել սիրուն տղե մե կանուկ է մեկ դեն, դորս մը լե մեկել դեն, ու պղզած կիշկին չիրար:

Տղեն կըսե.

— Դալու օղլան, կը հավնի՞ս իդա գորտան. ես հավներ իմ, դու լե կը հավնի՞ս:

Դալու օղլան կը կանի, դուշնմիշ կէղնի.

— Ջա՛նըմ,— կըսե,— ես ի՛մալ իդա գորտան ըսիմ սիրուն է: էդ վախտ թաղաքի աղջկա թանրին գընկնա ուր միտք, կը վերու կըսե.

— Գանգուլ սեվան գողալ օլուր՛:

Հըդ ըսելուն՝ քօլմա կավրի, գորտան կաշին կը պատուի, աղջիկ մե գեղնա դուս. աղջի՛կ, օր չըլնաս կթղեն՝ կը խմվի:

— Դիլանան թարիֆ օլմազ, ախլախնան մեյդանա գլամագ՞:

Դալու օղլան օր էգ խոսք չըսեր՝ հա՛մ գորտ կը մներ գորտ, հա՛մ ինքն լե կը մեռներ, մներ մըջ ջրհորին: Ջուր կը հանե, ինչ խըղար պետք է, աղջիկ լե էրկու նուռ կիտա ուրին, կըսե.

— Դալու օղլա՛ն, զայ շէնիս զէդ նունեբ, ըդոնց մեջ չըմեն ջավահիր քար ին:

Քուզըրներ զան կէնին, թե Դալու օղլան մեռավ մնաց մըջ ջըր-հորին: Տղեն, որ զլվան կը խըլվըլցու, կըսե.

— Ձիսի հանե՛ք, կը զարմանան:

Դալու օղլան գեղնա դուս, քարվան կը բառնան, գընկնա ճամպեն: էն դիուց քարվան մե գիկա, ճանաչ մարդ մե կէղնի, կըսե.

— Խնդիրք կէնիմ քըղնե, զիդա նունեբ տանիս տաս թաղաքի աղջկան, ուրին ըսիս՝ Դալու օղլան ջրհորեն սաղ-սելիմ չելավ, գնաց հըտ քարվընին:

Տարի մե, թե էրկու, հըտ քարվընին կզվունե, շատ էրկրներ կը մտնա, շատ քաղքներ կը տեսնա, գեղնա, չետե դա՛տուն գիկա հաս-

<sup>1</sup> Սրտի սիրածը գեղեցիկ կլինի (Մ. Բ.):

<sup>2</sup> Ոչ լեզվով կարելի է նկարագրել, ոչ փողով կարելի է գնել (Մ. Բ.):

նի ուր տուն: Զնուններ կը բանան, օր ի՞նչ, նուան հատերու տեղ աղ-  
րուժ ու զմրուխտ, ալմաստ ու մարգրիտ, կը ծախին, տուն ու տեղ  
կը դնին, բաղ ու բախշա կը տնկին, քոշկ ու սարա կը շինին. էրկու  
հատ շրմշրախ քար լե կը զարկին քոշկի ճակատ, էն գա՛: օր ար՛ւ  
կը զարկեր՝ յոթն ավուր ճամպա շաֆիս կիտեր:

Թագավոր օր մե կը տեսնա, օր ուր քաղքի մեջ հմալ քոշկ ու  
սարե մե կա, օր ուր քոշկ ու սարեն յետ կը մնա:

— Գյա՛լո,— կըսե,— էդ ի՞նչ ծանդր թուջար է, օր հմլա քոշկ  
ու սարա ունի, էդ ի՞նչ բան է, օր հմլա կը բրըխտա ընդրա տան  
ճակտին:

Մարդ մե կը ճամպե, զէդ թուջար կը կանչե ուր տուն, աղաթ  
ու իքրամ կէնե, կուտին, կը խմին: Թուջար էրթալու վախտ՝ կըսե.

— Թագավոր ապրած կէնա, խնդիր կէնիմ, լուսուն լե դու քու  
վազիր-նազիրով գաք իմ տուն:

Թագավոր ուր աթպաով կէրթա թուջրի տուն: Կուտին, կը խմին.  
կուրախնան: Սեղան-սուֆրեն օր կը վերցուն՝ թուջրի կնիկ դիկա  
թագավորի ձեռք կը պագե, էրկու անգին քար կը դնե յառջև, կըսե.

— Թագավոր պապ ապրած կենա, կը ճանչնա՞ս զիսի. ես քու  
աղջիկն իմ, իդա լե իմ մարդն է՝ Դալու օղլան է:

